

**ԱՂՆՆԻՔԱՅԻՆ ԱՍՈՒՄԱԿԱՐՍԱՆԵԿԱՆ  
ՍՈՎՈՐՈՒՅՑՆԵՐԻՆ ՈՒ ԾԵՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԿԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ**

**Ռ. Ա. ՆԱՅԱՊԵՏՅԱՆ**

Հայոց ընտանեկան ծիսակարգի բաղադրիչների համակարգում հարսանյազ և թաղման, ծննդի սովորույթներն ու ծեսերը հաստատուն համալիրներ են: Դրանք բախտորոշ են ոչ միայն ընտանիքի, այլև ամբողջ հասարակության համար, քանզի անմիջականորեն առնչվում են ընտանեկան նոր միավորի գոյացման, սերնդի շարունակման, ընտանիքի կազմի աճի կամ նվազման երևույթների հետ: Հենց սրանցով է պայմանավորված ժողովրդական մտածողության զանազան ձևերի ծնունդը՝ հաճախ սքողված կրոնական շղարշով: Հետևաբար, ընտանեկան ծիսակատարությունները ուսումնասիրելիս պետք է նկատի ունենալ վերոհիշյալ հանգամանքները: Այս առումով ուշագրավ են աղճնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը: Այս հոդվածում կանոնադառնաճյուղի կրոնամտգական մոտիվներին<sup>1</sup>:

Աղճնիքահայերի ավանդական հարսանյազ ծիսական համակարգում եղած բազմաթիվ հավատալիքները նպատակամղված էին նորապսակների արգասավորության և առողջության ապահովմանը: Հարսանեկան հացկերույթների ու ծիսական արարողությունների ժամանակ լայնորեն օգտագործվել են պտղաբերության խորհրդանիշ համարվող զանազան թարմ ու չոր մրգեր, որոնք միաժամանակ կազմել են հարսանեկան ուտեստի զգալի մասը<sup>2</sup>: Նշանդրեթից մինչև հարսնառ ընկած միջոցին փեսայի հարազատները (հատկապես կանայք) հաճախ այցելել են հարսնացուին զանազան նվերներով, որոնց մեջ գերակշռել են ընդդեմն ու մրգեղենը<sup>3</sup>: Սասնա խուլթիկ գյուղում հարսին հագցնելուց հետո կանայք նրա ծամերի հետ չամիչի ու ընկույզի շարք են հյուսել: Հարսանիքի ժամանակ հարս ու փեսայի զվիսն զանազան մրգերի, ընդդեմի ու քաղցրավենիների տարափ էր տեղում<sup>4</sup>, որը համատարած երևույթ էր պատմական Հայաստանի բոլոր մահանգներում:

Հատուկ ուշադրության է արժանի հարսանիքի ժամանակ խնձորի՝ որպես սիրո և պտղաբերության աստվածությունների, հիմնական խորհրդանիշի ծիսական կիրառումը<sup>5</sup>: Այն բոլոր կախարղությունները, որ վերագրվում են խնձորին,

<sup>1</sup> Տե՛ս նաև Ռ. Ա. Նահապետյան, Ժողովրդական հավատալիքների համակարգը հայոց ընտանեկան ծիսակատարություններում (ըստ աղճնիքահայերի մոտ պահպանված սովորույթների), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, № 4:

<sup>2</sup> Տե՛ս Ռ. Ա. Նահապետյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ), տետր 13, էջ 33: Մույն հոդվածի արդյուրագիտական հենքը մեր դաշտային դիտարկումների ընթացքում գրի առնված նյութերն են:

<sup>3</sup> ԴԱՆ, տ. 1, էջ 67: Ձատկին կանուխ հարսի տնից հավկիթ, զգեստեղեն, համրիչ էին ուղարկում փեսային, իսկ փեսայի տնից էլ՝ միրգ, ստակ (դրամ) էին ուղարկում հարսին (տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 1885, թիվ 3770):

<sup>4</sup> Տե՛ս «Մասիս», 1885, № 3763, էջ 351-352: ԴԱՆ, տ. 2, էջ 204:

<sup>5</sup> Տե՛ս E. Г. Карагов, Культ фетишей и животных в Древней Греции, СПб., 1913, էջ 163-164: Կ. Վ. Մալիք-Փաշայան, Ամառիտ դիցուհու պաշտամունքը, Եր., 1963, էջ 131-134:

այդ պաշտամունքներին նվիրված ծեսեր ու արարողություններ են: Խնձորի՝ անմահության և զավակ պարգևելու ընդունակությունը տոտեմական է: Այդ պատճառով էլ խնձորը, ըստ բանահյուսական և ազգագրական նյութերի, սիրո խորհրդանշ է: Ա. Մնացականյանը, ուսումնասիրելով խնձորի մոտիվի կիրառումը զարդարվեստում, իրավացիորեն եզրակացնում է, որ այդ պտուղը, ընդհանուր առմամբ սիրո և պտղաբերության խորհրդանշ լինելով, մարդու սերնդաճի իմաստ ունի<sup>6</sup>: Կենցաղում խնձորին վերագրվել է կախարդական հատկություն, ըստ որի այն պաշտպանում է արական կարողությունը. պսակի գնալուց փեսան, խնձորը շալե գոտու մեջ խրած կամ քփն մոտ պահած, հասնում էր եկեղեցի: Խնձորն ամենուրեք հարսանեկան մրգածառի՝ ուռք-նուռձի գլխավոր զարդն էր: Այս հնագույն պաշտման արդյունք էր այն, որ խնձորից սեր և առնական կարողություն պարգևող «ղեղեր» էին պատրաստում: Ա. Մնացականյանը Մատենադարանում պահվող № 6677 ձեռագրում հայտնաբերել և հրատարակել է այդպիսի «ղեղեր»-ի ու «ղեղատոմսեր»-ի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես օրինակ՝ «Այս ներքոյգրեալ թլխսս գրէ ի վերայ խնձորի և ձգէ ջուրն, որ գիրն ելանէ խնձորէն և քերէ կամ նայ ետոյ ջուրն խմել տուր, սիրէ...»: Կամ՝ «Այս ներքոյգրեալ թլխսս խնձորի վերան գրէ, տուր ուտէ, սիրէ և արծակութիւն լինի. մէկել թղթին վերան գրիր, թագաւորն (փեսան – Ռ. Ն.) պահէ և մեկ առնու՝ կին մերձենայ...»<sup>7</sup>:

Բաղեշում աղջկան այցելած տղայի մայրը կամ բարեկամուհին հավանելու դեպքում մի կարմիր խնձոր էր դնում նրա ափը<sup>8</sup>, որը, աղջկան յուրային դարձնելուց բացի, նաև արգասավորության նշան էր համարվում: Այս տեսակետից հետաքրքրական է նաև խնձորի մեջ մատանի կամ դրամ խրելու սովորությունը: Աղձնիքի հարավային շրջաններում հարսանյաց հանդեսի հրավիրում էին կարմիր խնձոր հրանցնելով, իսկ կանայք էլ իրենց հրավիրողների ծոցը չամիչ, ընկույզ, խնձոր էին ւցնում: Հարսնառի վերադարձին այդ արարողությանը չմասնակցող փեսան իր տան կտուրից ձեռքի կարմիր խնձորը նետում էր բակում կանգնած հարսնացուին<sup>9</sup>, որը նույնպես աղջկան յուրային դարձնելու և նրան արգասավորությամբ օժտելու ծես էր Աղձնիքի Արզն (Խարզան) գավառում: Մասունում հարս ու փեսայի գովքի հարսանեկան մի երգում, որը հատկապես փեսայի կենաց ծառի մասին էր, ասվում է.

Ծառ խնձորենին ծաղկեցավ,  
Թուփն ու տերև բոլորեցավ,  
Սուրբ խաչ վրեն որ բազմեցավ,  
Թագվոր աթոռը՝ ուրախացավ<sup>10</sup>:

Խնձորի կապը սիրո և պտղաբերության հասկացության հետ երևում է մայրիքավական շրջանից մեզ հասած՝ աղջկա կողմից երգվող հետևյալ խաղիկում.

Խնձոր մ'ունիմ, ա՛ն տղա՛,  
Առ տե, ճեպդ դի՛ր, տղա՛,  
Քանի մեր դռնեն անցնիս,  
Մի ամչնար, կե՛ր, տղա՛<sup>11</sup>:

<sup>6</sup> Տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 112-114:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 144: Հմմտ. Վ. Բոդյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 480:

<sup>8</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 190:

<sup>9</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 79, 22-24:

<sup>10</sup> Վ. Պետոյան, Մասնա ազգագրությունը, Եր., 1965, էջ 247:

<sup>11</sup> «Արևելք», 1892, № 2618, էջ 3:

Այստեղից էլ՝ խնճորի ծիսական մոտիվի անցումը «Մասունցի Դավիթ» դյու-  
ցագնավեպին, որտեղ ևս այդ պտուղն է Խանդութն առաջարկում Դավթին<sup>12</sup>, մի  
երևույթ, որը, թերևս, ձևավորվել է մայրական իրավունքի շրջանում:

Աղձնիքի գրեթե բոլոր գավառներում փեսային սափրելուց հետո հազցնելիս  
ուսերին գցում էին կարմիր, բանված չուխա, սպիտակ թաշկինակի մեջ դրած կար-  
միր խնճորն էլ ձեռքն էին տալիս, որ ափում պիտի պահեր մինչև պսակի ավար-  
տը: Աղձնիքի հարևան Հարք գավառում, ուր զգալի թվով սասունցի գերդաստան-  
ներ էին հաստատվել, եկեղեցի պսակադրության զնալու ճանապարհին փեսան  
մինչև տեղ հասնելը մի խնճոր էր պահում քթի մոտ<sup>13</sup>. այդ երևույթի իմաստը ևս ան-  
մասնական գույգի արգասավորության ապահովումն ու հավանաբար նաև չար  
աչքից պաշտպանելն էր: Թարմ ու չոր մրգերի և առանձնապես խնճորի, հատիկե-  
ղենի առատ օգտագործումը ամուսնական ծեսերի ընթացքում բացատրվում է  
դրանց արգասաբեր հատկանիշները մոզական ճանապարհով նորապսակներին  
հաղորդելու ժողովրդական հավատալիքով: Հարսին հոր տնից դուրս բերելիս լա-  
ցի, երգերի, քաջալերանքի ու մխիթարանքի խոսքերի պահին հարսնաքույրը  
հարսի «դեղին մուճակներուն» մեջ կորեկի հատիկներ էր լցնում, որպեսզի հարսը  
կորեկի նման արգասավոր, պտղաբեր լինի: Այդ առումով ուշագրավ է նաև Հա-  
յաստանի գրեթե բոլոր շրջաններում տարածված հարսանյաց կամ կենաց ծառ  
ստեղծելու և զարդարելու սովորույթը: Հիշեցնենք, որ Բաղեշում և շրջակա գյուղե-  
րում հարսանյաց ծառը կոչվել է *նուռ*, իսկ Մասունում՝ *ուռք*<sup>14</sup>: Բաղեշում փայտե  
խաչի շուրջը հասկեր էին հյուսում և չոր պտուղներ կախում, իսկ ձողերի ծայրե-  
րին կարմիր խնճոր և կարմիր ու կանաչ ներկած ձվեր էին ամրացնում: Աղձնիքի  
հովտային շրջաններում *փեսածառը* փշատի ծառի մի հաստ ճյուղ էր, որի փշերի  
վրա ամրացնում էին չոր մրգերի շարան, նուռ, խնճոր, իսկ գազաթին՝ սպիտակա-  
փետուր մորթած աքլոր՝ փեսացուին առնական կարողություն հաղորդելու ակն-  
կալիքով<sup>15</sup>: Մասունում ուռքից կախում էին գույնզգույն թելերի վրա շարված բազ-  
մազան թարմ ու չորացած պտուղներ՝ չամիչ, չիր, փշատ, ընկույզի միջուկ՝ բուր,  
ընկույզ, նուռ, նուշ, կարմիր խնճոր: Ուռքի խաչածև ձողերի տասներկու ծայրերին  
ամրացնում էին կարմիր խնճոր, կարմիր և կանաչ ներկած հավկիթներ: Ուռքի  
վերևի մասում կապում, ամրացնում էին նախշած գաթաներ: Ուռքը դառնում էր  
«կենաց ծառ»: *Ուռք-կենաց ծառը* հարսանիքի որոշ արարողություններում դառ-  
նում էր փառքի ու պտղաբերության խորհրդանիշ<sup>16</sup>, ուստի երբեմն էլ, երբ հարսն-  
առը մտնում էր փեսայի տան բակը, մակարները պսակածառի պտուղները «կո-  
ղոպտում» և նետում էին հարսի շքախմբին<sup>16</sup>: Նորապսակներն առագաստ մտնե-  
լուց առաջ նուռի պտուղներ էին ճաշակում, որի արձագանքը պահպանվել է  
«Մասնա ծոեր» դյուցագնավեպում.

(Նորապսակներին) բերեցին մեկ օթախի մեջ,  
Ուռք կտրեցին, օր մեկտեղին<sup>17</sup>:

<sup>12</sup> «Մասնա ծոեր», ընդհանուր խմբ. Մ. Արեղյանի, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Կ.  
Ա. Եր., 1936, էջ 33, 96, Կ. Բ., 1951, էջ 604:

<sup>13</sup> Տե՛ս Բենսե, Բուլանջի կամ Հարք գավառ, «Ազգագրական հանդես» (այսուհետ՝  
ԱՀ), գ. Ե, Թիֆլիս, 1889, էջ 113, «Բազմավեպ», 1867, էջ 310:

<sup>14</sup> Նուռձ բառացի նշանակում է գույնզգույն բրդե թելերով զարդարված փեսածառ  
(տե՛ս Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 506):

<sup>15</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 1, էջ 75, տ. 13, էջ 89:

<sup>16</sup> Տե՛ս Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 250, 259:

<sup>17</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 25:

<sup>18</sup> «Մասնա ծոեր», Կ. Բ., էջ 526:

Հարսանիքը ավարտվում էր մակար-ազապարհների և թագվորի կողմից ուղի պտուղները ճաշակելով և կանաչ-կարմիր թելերը կտրելով (ըստ այդմ՝ «ուռցուռք կտրել», «նուռձ կտրել», «թագ վերցնել», «թագ կտրել» արտահայտությունները հոմանիշ են)։ Վերջում հանդիսավոր կերպով վերցվում էր փեսայի պասկը։

Փեսայի արգասավորմանն է միտված նաև հարսնաբույրների միջոցով հարսի մոր՝ փեսային ուղարկված նվերը՝ խորվու գառ, քաղցրավենիք, թարմ ու չոր մրգեր, հավեր, խորիզով գաթա, որ ճաշակելու էր փեսան առագաստ մտնելուց առաջ։

Որոշ տվյալների համաձայն՝ հարսնաձին (հարսին բերող մատակ ձին) և զարդարված էր լինում փեսածառի նման<sup>18</sup>։ Պտղաբերություն ապահովելու նպատակով նմանօրինակ «ծառերի» օգտագործումը բնորոշ է աշխարհի շատ ժողովուրդներին<sup>19</sup>։

Հավանաբար հարսի արգասավոր լինելուն էր միտված նաև մատակ ձիով հարս տանելու վերոհիշյալ սովորույթը, երբ ձիու թամբին երկտակ փովում էր օժիտի մասը կազմող ջեջիմը, վրան՝ նորածնի համար հատուկ կարված վերմակը, որի վրա նստած՝ հարսը գնում էր փեսայի տուն։ Վերջինիս տան բակը հասնելիս նորահարսի գիրկն էին տալիս տղա երեխա<sup>20</sup>, որպեսզի նա էլ արու զավակ ունենար։ Այդ նույն ակնկալիքով նորապսակներին, ինչպես նաև ամուրի տղաներին հարսանիքի օրը պատեցնում էին թոնրի, իսկ Տյառնընդատաջին խարույկի շուրջը<sup>21</sup>։ Աղջիկներին արգելվում էր ուտել տաշտի քերանքից թխված հաց, նստել թոնրի խուփին<sup>22</sup>, որը, ըստ երևույթին, անմիջական աղերս ուներ Վանատուրի պաշտամունքի՝ թոնրի խուփի պտղաբերական հատկանիշի հետ<sup>23</sup>։

Հարսանիքի ողջ արարողակարգը ուղեկցվում էր ժողովրդական հավատքի պատկերներով, որի անմիջական խորհուրդը թշմամի ուժերն ու չար աչքը խափանելը և բախտ ու հաջողություն ապահովելն էր։ Չարքերի դեմ այս զգուշավորությունը անհրաժեշտություն էր, քանզի, ժողովրդական ըմբռնման համաձայն, դրանք ձգտում էին խափանել սերնդագործման ունակությունը՝ մարդկանց դատապարտելով ամուլթյան։ Չավակի ու սերնդի շարունակության ապահովումը մշտապես եղել է հայ մարդու մտահոգության առարկան։

Այդ նույն նպատակով ինչպես փեսացուի, այնպես էլ հարսնացուի տանը պատրաստում էին այն անկյունը, որտեղ վարագույրի հետևում հարսը պետք է առանձնանար հարսնաջրոջ և հարսնեղբոր հետ։ Վարագույրը զարդարում էին զանազան չարախափան հմայական պահպանիչներով, հոտուրքներով։ Շատ վայրերում հարսի զգեստները հագցնելիս գոտին կապում էր քավորը՝ նախ երեք

<sup>18</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 24։

<sup>19</sup> Տե՛ս Ջեյմս Չորջ Ֆրեզեր, Ոսկե ճյուղը. Մոգություն և կրոնի ուսումնասիրություն, Եր., 1989, էջ 146-147։ Ասորիների սովորույթի համաձայն՝ հարսանեկան թափորը հարսի հետ միասին փեսայի տուն գնալիս վերջինս իր ընկերների հետ բարձրանում է տանիք՝ ձեռքին ունենալով ձողին ամրացված քառանկյուն շրջանակ։ Շրջանակից գույնզգույն թելերով մրգեր են կախված. խնձոր, նուռ, նաև տարբեր զարդանախշերով մետաքսե թաշկինակ։ Փեսան 3 խնձոր է պոկում և շարտում հարսի ուղղությամբ։ Ենթադրում են, որ այս գործողությունը հարսին դարձնում է քեղուն, բազմածին։ Միևնույն ժամանակ հարսի գլխին մանր դրամներ են շաղ տալիս։ Հավանաբար սա էլ նորապսակներին լիություն, առատություն պարգևելու խորհուրդն ունի (Տե՛ս В. Т. Муратхан, Обычай, связанные с рождением и воспитанием ребенка у сирийцев, «СЭ», 1937, № 4, էջ 63)։

<sup>20</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 17, 29։

<sup>21</sup> Տե՛ս «Արևելք», 1893, № 2711, 1889, № 1710։ ԴԱՆ, տ. 11, էջ 31, 44։

<sup>22</sup> Տե՛ս «Բիրական», 1899, թիվ 29, էջ 457։

<sup>23</sup> Հմմտ. Վ. Բոդյան, Պատմական-Վանատուր-Ամանոր դիցաբանական գույզի փերաբերյալ, Բե՛Հ, 1980, № 2, էջ 106-108։

անգամ այն պատելով հարսի գլխավերևում կամ նրա շուրջը ձախից աջ, ապա խփելով նրա ուսերին ու ասելով. «Աստված քեզ որդի պարգևի»: Քավորկինն էլ հարսի գլխին էր գցում քողը: Մեկ այլ սովորույթի համաձայն՝ հարսի եղբայրն էր գոտին երեք անգամ հարսի գլխավերևում պտտեցնում՝ «յոթ մանչ և մեկ աղջիկ ըսելով», որպեսզի նորահարսը նույնքան զավակներ ունենա<sup>26</sup>: Ըստ մեկ այլ սովորության՝ հարսի սկեսրայրն է կապում և արձակում հարսի գոտին յոթ անգամ, իսկ հարսը յոթ անգամ համբուրում է սկեսրայրի ոտքը<sup>27</sup>: Դժվար չէ նկատել քավորի կարևոր դերը նոր կազմվող ընտանիքի որդեծնության ու հարատևության պահպանման հարցերում: Հարսին վարագույրի հետևից դուրս հանող կինը այրի կամ չբեր չպետք է լիներ: Տճից դուրս գալիս հարսը, որպես հայրական տանը հրաժեշտի ծես, համբուրում էր թոճի շուրթը, որը օջախի, թոճի պաշտամունքի դրսևորումներից է:

Հարսանյաց ծեսերի տարրերից էին նաև այն միջոցառումները, որոնց նպատակն էր նորասպակներին գերծ պահել կարծեցյալ չար ու վնասակար ուժերի ազդեցությունից: Դրանցից են չար ոգիներին խաբելու հնարները: Այսպես, չար ուժերի ուշադրությունը շեղելու նպատակով, ինչպես նշվեց վերը, հարսնեղները եկեղեցական պսակադրությունից հետո երբեք չէին վերադառնում նույն ճանապարհով<sup>28</sup>: Փեսային «վնասող» չարքերին մոլորեցնելուն էր միտված փեսային լողացնելու ծեսը: Մերկացած թագվորը նստում էր քուրսու վրա: Մակարներից մեկն էլ մերկանում և նստում էր նրա կողքին՝ ցածր աթոռին. մակարներից մեկ ուրիշը օճառով լողացնում էր թագվորին, իսկ մի երրորդը՝ մակարին: Վերջինիս վրա լցվող ջուրը կամ տաք էր լինում կամ սառը, և նա մերթ այրվելուց էր գոռում, մերթ պաղելուց՝ դրանով կարծեցյալ չարքերի ուշադրությունը բևեռելով իր վրա<sup>29</sup>, որով իբր պահպանվում էր փեսացուի զավակ ունենալու ընդունակությունը: Հնուց ի վեր երկաթին չարահալած հատկություն վերագրելով՝ ոմանք թագվորին լողացնելիս տակը երկաթ էին դնում: Գրեթե նույնը կատարվում էր հարսին լողացնելու ժամանակ:

Նույն բովանդակությունն ուներ նաև փեսացուին սափրելու ծեսը, երբ նրա երեսը շախմատածև ամփելով, վերածում էին բոստանի. չսափրված մազերը ներկայացվում էին իբրև սեխ ու ձմերուկ, և սափրիչն ու մանկտավազը կատարվող բոստանը վաճառքի էին հանում: Մասունում և հարևան Հարք գավառում այդ ծեսը կոչվում էր *բուպրան դնել*<sup>30</sup>: Հայտնի է, որ, ըստ ժողովրդական հավատալիքների, կախարհությունն առավել ազդում էր մազի, եղունգի, լուսանկարի, հագուստի վրա, ուստի փեսայի մազերը որպես բոստան ներկայացնելը նպատակ ուներ շեղել աներևույթ չար ուժերի կամ չարակամությամբ տրամադրված մարդկանց ուշադրությունը<sup>31</sup>, մյուս կողմից բոստանն ինքնին պտղաբերության խորհրդանիշ էր: Որպեսզի փեսա-թագվորը «կապ» չընկներ, ոտքի տակից խնամքով հավաքում էին սափրված մազերը:

Նորասպակներին վտանգից գերծ պահելու միջոցառումներից էր նաև պսակի գնալուց առաջ հարսանյաց հանդեսը քահանային օրհնել տալը<sup>32</sup>: Ե՛վ հայերը

<sup>26</sup> Տե՛ս «Բիրակն», անդ:

<sup>27</sup> Տե՛ս Կ. Տոտոյան, Գաւառական սովորութիւնք ամուսնութեան (Խալիկ գյաղ), «Մասիս», 1885, № 3763, էջ 851-852:

<sup>28</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 48:

<sup>29</sup> Տե՛ս Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 244:

<sup>30</sup> Տե՛ս Ե. Կարապետյան, Սասուն, Ազգագրական նյութեր, Եր., 1963, էջ 163-166, Բեհե, նշվ. աշխ., էջ 110, 122:

<sup>31</sup> Տե՛ս Մ. С. Бутиннова, Как возникла религия, М., 1957, էջ 67-69:

<sup>32</sup> Տե՛ս Ս. Հովհաննիսյան, Պսակադրության իրավական կարգավորումը վաղ ավատական Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, թիվ 1, էջ 200:

(մասնավորապես աղձնիքցիները), և՛ աշխարհի տարբեր ժողովուրդներ<sup>31</sup> հավատում էին, թե իբր հնարավոր է կախարդական զանազան ծեսերի կիրառումով փեսային գրկել առնականությունից<sup>32</sup>: Նման պատկերացման ամենատարածված դրսևորումը նորապսակների ընտանիքներին թշնամի որևէ մեկի կողմից փեսային «կապելու» գործողությունն էր, որն Աղձնիքում արվում էր հետևյալ կերպ. այժի մագից հյուսված թելը կամ պարանը թաթախում էին արյան մեջ (հատկապես, եթե հաջողվեր, հարսանիքի խնջույքի մագուի արյան) և հանգույցներ անում: Ամեն մի հանգույց, ըստ կապողի խղճի և հայեցողության, նշանակում էր փեսայի սեռական կարողությունը «կապելու» որոշակի ժամանակ (մեկ, երկու, երեք օր, ամիս կամ տարի)<sup>33</sup>: Ահա ինչու Սղեբղում առագաստ մտնելուց առաջ փեսայի զգեստները չէին կոճկում, գոտի չէին կապում: Կապարձակ լինելու և պսակվող զույգին հավիտենական սիրով իրար կապելու նպատակով պսակի պահին զաղտնաբար նորապսակների քղանցքները ծակծկում էին ասեղով և չհանգուցված թելով կառում<sup>34</sup>: Կար նաև թշնամաբար տրամադրվածին վնասագերծելու հնար: Հարսանիքի մագուց՝ արջառը, մորթում էին երածշտության ուղեկցությանը: Քավորը զոհի արյունով խաչ էր անում փեսայի ճակատին, արյան մեջ թաթախում բացված կողպեքը կամ դաշույնի ծայրը և, թելը հանգույց անելով, կողպեքը բանալիով փակում ու դաշույնի սայրը մտցնում պատյանի մեջ. սրանով «կապվում», «փակվում», արգելակվում էին չար ոգիները: Կողպեքը, դանակը բացում էին առագաստի գիշերը նորապսակների անկողնու մոտ: Երբեմն դա անում էին հարսնառի վերադարձի միջոցին մորթված աքլորի արյունով: Նույնպիսի գործողություն էր կատարվում նաև «խոսքկապի» ժամանակ. փեսայի մայրը հարսի մատը մատանի դնելու պահին իր հետ բերած կողպեքը փակում էր և բացում առագաստի գիշերը՝ հարսին «կապվելուց» ազատելու նպատակով<sup>35</sup>: Նույն ակնկալիքով հարսնառի դիմավորման պահին և եկեղեցում պատարագի ժամանակ սկեսուրը հարսի ափն էր դնում «աչքառուլունք» համարվող լուսնաձև կտրված, առյուծի պատկերով արծաթյա դրամ: Կամ հարսնառը, որ Բաղեշում կոչում էին հարսնած, փեսայի տնից հարսի հոր տուն ուղևորվելու պահին փեսայի գրպանը փակ դանակ էին դնում, որը փեսան պարտավոր էր բացել և դնել իր ու նորահարսի միջև հայրական տանը իրար կողք նստելու պահին:

85-ամյա բանասաց Աղավնի Ասատրյանը (Նագրվան գյուղ) 1973 թ. մեզ պատմեց հետևյալը: Բաղեշ քաղաքում և շրջակայքում հարսնածի վերադարձին փեսայի հոր տանը հավ էին մորթում և կողպեքը արյունոտում. բանալին վերցնում էր քավորը, իսկ կողպեքը՝ փեսայի մայրը: Երբ արլեն անկողին էին գցում, քավորը բանալին տալիս էր փեսայի մորը: Կողպեքը բանալիով բացում էին այն պահին, երբ փեսան ու հարսը առագաստ էին մտնելու: Շատ տեղերում միայն քավորն էր կատարում այդ գործողությունը: Նպատակն այն էր, որ փեսան «կապ» չընկնի: «Կապ» գցելու համար փեսայի ընտանիքի նկատմամբ չարակամորեն տրամադրված մեկը (հիմնականում կանայք) այժի մագից թելը թաթախում էր արյան մեջ և հանգույց անում՝ մտքում «կապելով» փեսայի սեռական ունակությունները: Մեկ հանգույցը խորհրդանշում էր մեկ ամիս, մեկ տարի, երկուսը՝

<sup>31</sup> Տե՛ս Գ. Ս. Снесаров, Реликты домусульманских верований и обрядов у узбеков Хорезма, М., 1983, էջ 79:

<sup>32</sup> Տե՛ս Ե. Լալայան, Նախնականի գավառ, Ա մասն, Գորքն, ԱՀ, գ. XII, Թիֆլիս, 1904, էջ 129: Նույնի՝ Վայոց Ձոր, գ. XIII, Թիֆլիս, 1906, էջ 159: Նույնի՝ Վարանդա, էջ 136:

<sup>33</sup> Տե՛ս ԳԱՆ, տ. 1, էջ 80-81:

<sup>34</sup> «Բիւրակն», 1900, էջ 261-263:

<sup>35</sup> Տե՛ս ԳԱՆ, տ. 11, էջ 24-25:

երկու, և այսպես շարունակ: Ըստ քանասացի՝ մոզական գործողությունները պահպանվել են անգամ Հայաստան տեղափոխվելուց հետո, մինչև 1950-ական թթ.: Եթե չհաջողվեր «կապը» կանխել, ապա փեսային կարող էր ազատել միայն «կապ գցողը»՝ հանգույցները քանդելով:

Չոհաբերվող եզան արյունը համարվում էր չարախափան: Ահա թե ինչու ազապչարիներից մեկը նրա արյունով խաչ էր անում փեսացուի ճակատին, իսկ փեսայի մայրը արյունաթաթախ ձեռքով խաչ էր քաշում տան դռան վրա, որպեսզի չար աչք չդիպչի:

Դեպի եկեղեցի պսակերթի պահին զգուշանում էին, որ փեսացուի և հարսի մեջտեղով որևէ մեկը չանցներ, «կապ» չզցեր: Այս նպատակով է, որ նորապսակները երկու կողմից առնվում էին հարսնաքրոջ, քավոր-քավորկնոջ և մակար-ազապչարիների հսկողության ներքո: Նույն զգուշությունը պահանջվում էր պսակի արարողությունից հետո կամ հարսի հոր տնից փեսայի տուն գնալու պահին: Բաղեշում ժամ (եկեղեցի) գնալիս և թե վերադառնալիս հարսն ու փեսան իրար կիպ կպած պիտի քայլեին, որպեսզի չարական մարդիկ մեջտեղով չանցնեին և փեսային «չկապեին»: Պետք է հետևեին նաև, որ պսակի պահին եկեղեցու տանիքը քար չզցեին: Ամենավտանգավորը համարվում էր այն «կապը», երբ որևէ մեկը կարողանում էր նրանց արանքով մի բուռ կորել անցկացնել և հավերհն տալ, եկեղեցու և փեսայի տան շեմին այդ նույն մարդիկ մազից հյուսած թել դրած կամ մեխ խրած լինեին և «թագվորին կապելու» նպատակով հարսնևոր զույգի անցնելուց հետո թելը հանգուցեին<sup>36</sup>:

Եթե չարամիտները կարողանում էին առազատի գիշերը հարս ու փեսայի առաջին խոսակցությանը ականջ դնել, մի թել էին հանգուցում՝ փեսային «կապելու» միտումով: Նույն կերպ կախարդները «կապվածին» զրկում էին առնականությունից<sup>37</sup>:

Չար, աներևույթ ուժերը հարսանիքի օրերին ամեն վայրկյան և ամեն տեղ դարանակալ էին հարսնևոր զույգի նկատմամբ. առանձնապես վտանգավոր էին դառնում մուտքերը, որտեղ «քնակվում» էին չար ոգիները: Դրա համար էլ ազապչառին ձեռքի մերկացրած թուրը կպցնում էր դռան կամարակապ քարին կամ խրում դռան կողը՝ թրի տակով անցկացնելով զույգին: Շատ վայրերում այդ գործողությունը կատարում էր քավորը՝ նախքան հարսի ու փեսայի ներս մտնելը սուրը խրելով դռան սեմը՝ չար ոգիներին հալածելու նպատակով: Պսակի ժամանակ քավորը ձեռքի սուրը և պատյանը պահում էր կամ թոճրի, կամ ամուսնացողների գլխավերևում, որի հովանու ներքո կատարվում էր պսակի արարողությունը: Սուրը, ըստ հավատալիքների, քավորի ձեռքում մոզական ուժ է ստանում, չեզոքացնում, վանում չար ոգիներին\*:

Պսակի արարողության պահին հարսնաքույրը պինդ բռնում էր հարսի ծամբրից՝ նրան «կոխ» ընկնելուց զերծ պահելու համար: Հարսնացուն «քառսնքակոխ» կլիներ և ամուլ կմնար, կամ զավակները չէին ապրի, եթե պսակի պահին «քառսունքոտ» կին հավեր նրանց:

<sup>36</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 1, էջ 79-81:

<sup>37</sup> Տե՛ս Ս. Ն., Նախապաշտումներ, զուշակություններ և սովորություններ Սղերդի մեջ և շրջակայքը, «Բիւրակն», 1900, թիվ 17, էջ 261-263:

\* Քավորի ներկայությունը պարտադիր է պսակի արարողության ժամանակ՝ որպես եկեղեցական ծեսերի պաշտոնական վկայի: Շատ արարողություններում հստակ նկատելի է, որ քազում սովորություններ քավորին վերագրում են մի արտասովոր, անտեսանելի ուժ, որի շնորհիվ նա կարողանում է բոլոր աներևույթ չարքերից պաշտպանել նորակազմ ընտանիքը, ապահովել նրա բարգավաճումը:

Փեսային «կապելու» մտավախությունից էր բխում նաև հարսին ձիուց իջեցնելուց հետո թամբը բռնելու սովորույթը<sup>38</sup>։ Աղձնիքի Դուրին և այլ գյուղերում, երբ հարսին «թագվորի» տան բակում իջեցնում էին ձիուց, նրա բարեկամներից մեկը անմիջապես վերցնում էր թամբը, որպեսզի հարսի ոտք դրած տեղում՝ զանգուսապանդակի վրա, փեսային «կապելու» նպատակով որևէ մեկը քար չզցեր։ Դրանից հետո հարսի ձեռքը տալիս էին կալե փարչ՝ չորացրած մրգով լի, որը փեսայի տան շենն անցնելիս պարտավոր էր ոտքով կտտրել։ Ըստ որոշ պատկերացումների՝ փեսան կղաճնար սեռապես անուժ, եթե մինչև իր ամուսնության քառասունքը լրանալն այցելել մեռելատուն։ Այս դեպքում նա համարվում էր «կոխ ընկած»։ Հավատում էին, որ «կոխը» կվերանար հանգուցյալի քառասունքը լրանալուց հետո միայն\*։ Խուսափում էին նաև երկու հարսանիքների դեմ-դիմաց հանդիպումից, հակառակ պարագայում «նրանց քառասունքները կխառնվեին»։ Նորապսակների քառասունքի խառնվելը կանխելու համար փեսա-թագվորները պետք է քառուն փոխանակեին միմյանց գոտիները կամ զնդասեղներ՝ հագուստի կրծքամասում զաղտնի ամրացնելով։ Նորապսակները կարող էին «կոխ ընկնել» նաև քառասունքը դեռևս չլրացած ծննդկանին այցելելու հետևանքով։ Դրա համար նորածնին տնից դուրս հանելուց հետո էին թույլատրում մտնել ներս, ապա երեխային դնում էին նորապսակների գիրկը։ Եթե և՛ նորապսակները, և՛ տղոցկանը քառասունքի մեջ էին, իրար այցելելու դեպքում կխառնվեր նրանց քառասունքը և նորապսակներին երեխա չէր ծնվի։

Այս կերպ ստացած «կոխը» չեզոքացնելու նպատակով երեք սպիտակ ափսեում «գիր» էին անում, իսկ ավելի հաճախ մայրը նորապսակներին լողացնում էր մի տաշտի մեջ՝ մեջք մեջքի ամուր հենված, յոթ անգամ՝ սրբաթասի մեռոնաջրով և յոթ սրբի անուն տալով<sup>39</sup>, կամ էլ եկեղեցու ավելն էին դնում նորապսակների անկողնու տակ, իսկ Բաղեշում լողացնում էին մեջը շիկացած երկաթ գցած ջրով։ Ի դեպ, 7 կամ 40 վճռական թվերը, ըստ Վ. Բոդյանի, կախարդական բնույթի են, որոնք ամուսնական ծեսերում որոշակի իմաստ ունեն։ 7-ի կախարդական իմաստը անցել է հեթանոսական դիցարան՝ 7 գլխավոր աստվածությունները մասոնանշելու, պտղաբերությունը և այլ բնագավառների հաջողություններն ապահովելու համար։ Իսկ 40-ը, որը հաճախ կնոջ պտղաբերության հետ է կապվում, ըստ երևույթին խորհրդրանշում է առավել հին ժամանակների բազմաթիվ աստվածություններ ու ոգիներ, որոնք օգնելու էին նրան և՛ ամուսնանալիս, և՛ պտղավորվելիս, և՛ երկունքի ժամանակ (հմմտ. դրանց մնացուկները՝ չորեքմուտը, ուրբթմուտը և կիրակմուտը)։ Ինչպես երևում է, «քառասունք» բառիմաստը հենց այդպիսի 40 միավորների հետ է առնչվում<sup>40</sup>։ «Կոխ» ընկնելուց խուսափելու կամ այն կանխելու համար հարսանիքի ժամանակ կամ առազատի պահին Մասունում հրացանային համազարկեր էին տալիս՝ չարքերին վախեցնելու նպատակով, կամ առազատից առաջ փեսան պարտավոր էր իր կոճակներն արձակել։ Չար ուժերի ազդեցությունից հեռու պահելու համար նաև փեսածառ ուռք-նուժը զարդարում էին կանաչ-կարմիր բրդյա թելերով և պսակի օրից մինչև առազատի գիշերը հարսի ու փեսայի առջևից ման էին անում։ «Կոխ ընկած» նորահարսին յոթ անգամ պտտում էին Տյառնընդդառաջի խարույկի շուրջը, որի իմաստը պտղաբերելու կարողության վերականգնումն էր։

<sup>38</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 205-207, տ. 1, էջ 80-83, տ. 13, էջ 37։

\* Այրի կնոջ կրկնապսակի գիշերը «կոխ ընկնելու» և նախորդ ամուսնու «աչերը չճայթելու» ու իրեն գիշերով չայցելելու համար, որպես նախագուշակական միջոց, զերեզմանում հավկիթ էին թաղում, իսկ դրացիներն էլ գիշերային ծանրություն չզգալու համար իրենց բարձերը հակառակ կողմն էին դարձնում։

<sup>39</sup> Վ. Բոդյան, Ընտրության և ամուսնության ձևերը «Մասունցի Դավիթ» էպոսում., ԲԵՀ, 1976, քիվ 1, էջ 85։

<sup>40</sup> Տե՛ս «Տարեկան սովորություններ Խուրթիկ գյուղում», «Մասիա», 1985, № 3770 ։

Տյառնընդառաջի օրը նորապսակների քառասունը վերջանում էր, թեկուզ մեկ օրվա ամուսնացած լինեին: Այդ օրը նորապսակներին ման էին տալիս կրակի շուրջը յոթ անգամ՝ քառասունքից դուրս հանելու և Տյառնընդառաջի կրակով արգասաբեր հատկանիշներով օժտելու համար: Փեսա, արու զավակ ունեցող հայրերը կրակի մեջ էին հրում թաղի կտրիճներին, որպեսզի կրակից զորություն ստանան. ծեսն ավարտվում էր թաղեցիներին զինի և ուտելիք հրամցնելով<sup>41</sup>:

Ծիսակարգի ողջ ընթացքում հարսն ու հատկապես փեսան մշտապես ենթակա էին չարական ու վնասաբեր ուժերի ներգործությանը, հանգամանք, որ նկատելի էր փեսային լողացնելու, սափրելու, զգեստավորելու, մսացուն մորթելու, «տոքը» գրավելու և այլ ծեսերի մեջ<sup>42</sup>:

Փեսայի արգասավորության ընդունակությունը չարքերից պաշտպանելու, վերջիններիս ուշադրությունը շեղելու հմայական միջոցներից էր նաև գունավոր թաշկինակը: Սովորույթի համաձայն՝ փեսայի հարսանեկան զգեստի մասն էր կազմում աջ ուսից կտրծքը զարդարող կանաչ թաշկինակը, հարսի հոր տանն էլ ավելացվում էր ձախ ուսից խաչաձև զարդարող կարմիր թաշկինակը, որ կոչվում էր ուսկապ: Հարսանիքի ամբողջ ընթացքում՝ զգեստավորվելուց մինչև «թագի» վերացումը՝ հարսանիքի ավարտը, փեսա-թագվորը քիթ ու բերանին թաշկինակ էր պահում՝ չարքերի՝ քթով-բերանով ներս խուժելը կանխելու համար: Շատ դեպքերում նա պսակերթի ժամանակ քթի տակ էր պահում թաշկինակով փաթաթած խնձորը: Նմանատիպ թաշկինակներ գոտիկից կախում էին նաև ազապչարիները, դրանցով զարդարում էին «աղվեսի»՝ հարսնածի գալուստը ավետող ազապբաշու ձին՝ դրանք ականջներից կապելով: Կանաչ-կարմիր թաշկինակներով իբրև դոռչակ հարսնածի երթին մասնակցելը պայմանավորված էր դրանց վերագրվող չարխափան, մոգական հատկանիշներով:

Այդ պատկերացումով հարսնևորները պսակադրության գնում էին աղմուկ-աղաղակով, հրացանածությամբ, պարելով ու կաքավելով, քավորի, ազապչարիների գույնզգույն մետաքսե թաշկինակ-դոռչակների ուղեկցությամբ: Արգասավորություն խորհրդանշող կանաչ-կարմիր թաշկինակ-դոռչակներով էին զարդարվում նաև հարսի կառքը, հարսին բերող մատակ ձին:

Կարմիր, կանաչ թաշկինակների պես լայնորեն գործածվում է նաև նաքստը<sup>43</sup>, որը, արգասավորություն խորհրդանշելուց զատ, ուներ նաև չար ուժերի ներգործությունից, հարս ու փեսային «կապ» ընկնելուց զերծ պահելու խորհուրդ:

Մասունում եկեղեցում պսակի արարողության ժամանակ քահանան վերցնում էր մետաքսե կարմիր ու սպիտակ երկու բարակ թել, և քավորի հետ ծայրերը ոլորելով՝ կազմում նարտո: Նարտուի կարմիր գույնը փեսայի սոնականության, ուժի խորհրդանիշ էր, իսկ սպիտակ գույնը՝ հարսի կուսության, անմեղության: Այն խորհրդանշում էր նոր ընտանիքի ստեղծման գաղափարը:

Աղձնիքահայոց հարսանիքներին բնորոշ էին նաև աղմկալի տեսարանները, գոտեմարտ-կոխը, հրացանածությունները, նվագն ու թմբուկը, ռազմաշունչ և մեղմիկ պարերը, գոռում-գոչյունները, որոնք գիտնականները կապում են առևանգման

<sup>41</sup> Տե՛ս «Տարեկան սովորություններ Խուլթիկ գյուղում», «Մասիս», 1885, № 3770:

<sup>42</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, Ժողովրդական հավատալիքների համակարգը հայոց ընտանեկան ծիսակատարություններում, էջ 54-61:

<sup>43</sup> Նարտը կարմիր ու կանաչ մետաքսից ոլորած թել է, որ քահանայի ձեռքով պսակադրության ժամանակ ազուցվում է նորափեսայի ու նորահարսի պարանոցներին, թելի ծայրերն ամրացվում են մեղրամոմով, որը կնքվում է խաչով: Քանի դեռ այդ թելերը կապված են մնում նորապսակների պարանոցներին, նրանք չեն կարող առազատ մտնել. նարտոն, ըստ ժողովրդական սովորույթի, պսակի երրորդ օրը առանձին հանդիսավորությամբ քանդվում է քահանայի ձեռքով, որից հետո արդեն նորապսակները մտնում են ամուսնական հարաբերությունների մեջ (տե՛ս Խ. Մամուկյան, Հին Հայաստանի կուլտուրան, Խ. Ա, Եր., 1931, էջ 345):

սովորության մնացուկների հետ, մինչդեռ, մեր համոզմամբ, դրանք նաև աղերսներ ունեն հավատալիքների հետ: Աղմկալից տեսարանները չար ոգիների ուշադրությունը իրենց վրա գրավելու, նորասպակներին պաշտպանելու միտում ունեին:

Այդ նույն մտայնությամբ իրականացվում էր փեսայի ու հարսի հանդերձների օրհնության ծեսը: Քահանան ուրբաթ օրը նախ փեսայի, ապա հարսի տանը խաչով և «Մաշտոցով» օրհնում էր հանդերձները, որից հետո հարսանքավորների խումբը շարժվում էր դեպի եկեղեցի՝ պսակի արարողությունը կատարելու: Այս ծեսի նպատակը, հավանաբար, չար ուժերից նորասպակներին պաշտպանելու խորհուրդ ուներ: Ըստ այդմ էլ պարը, աղմուկն ու մենամարտերը իրենց բարձրակետին էին հասնում պսակերթին ու վերադարձին, հատկապես եկեղեցու առջև մինչև ներսում արարողության սկսվելը: Պսակերթի ու դարձի ճանապարհին նորասպակները իրենց շքախմբով անջատ էին գնում պսակադրության, այնպես որ մյուս հարսանքավորների հետ ճանապարհները չհատվեն: Այդ ընթացքում պատանիները ալրոտում էին իրենց երեսները, զանազան խեղկատակություններ անում, այստեղ-այնտեղ վազում: Փեսայի մերձավորներից մեկին էլ նստեցնում էին էշին, պոչը ձեռքը տալիս և բոլոր կողմերից հարվածում՝ չար ոգիների ուշադրությունը նորասպակներից շեղելու, իրենց վրա գրավելու համար: «Հալածվողը» կոչվում էր աղվես: Նա էր աղջկա հոր տուն հասցնում նշանադրության և հարսանիքի ուտեստեղենը՝ խմիչքը, ոչխարը կամ արջառը, յուղն ու բլրուրը, քաղցրավենիքը և այլն: Եթե աղվեսը խաբս չտար և աղջկա գյուղի կամ թաղի երեխաների «ձեռքն ընկներ», նրան կհալածեին՝ գլխարկը թոցնելով, ոչխարը խլելով, վրան մոխրաջուր լցնելով, կատակով ծեծելով, որը վերջ կունենար միայն խնամիներից մեկի օգնությամբ<sup>44</sup>:

Բաղեշում փեսայի քույրը, քավորկինը մի քանի հարսների և աղջիկների հետ գնում էին հարսնացուի տուն՝ իրենց հետ հինա առած. այնտեղ լողացնում էին հարսնացուին մի աղջկա հետ, պողպատ կամ դաշույն դնում տաշտի մեջ, որ չարքերը մոտենալ չհամարձակվեն: Նորահարսից բացի հինայում էին նաև հրավիրված ջահել աղջիկների ու հարսների ձեռքերը՝ չարքերին շփոթեցնելու համար: Բացի այդ, հինա դնելը նաև մնամողական ծես էր՝ մյուս մասնակիցներին ևս բախտավորությամբ օժտելու, ջահել աղջիկներին թագ ու պսակի արժանացնելու համար<sup>45</sup>:

Նորասպակների մուտքը փեսայի տուն ծխական արարողությունների ուշագրավ պահերից է: Այդ շարքում կարելի է առանձնացնել զոհաբերությունը, որի նպատակը միայն չար ոգիների դեմ պայքարի սնահավատ գործողությունը չէ: Ավելի շուտ այն պետք է համարել հարսի առաջին ոտնամուտը նոր օջախ բարեհաջողությամբ հմայելու գործողություն: Չոհաբերության նախնական առարկաները, բնականաբար, հին սմային աստվածություններն էին, որոնք, ժողովրդական պատկերացմամբ, հանդես էին գալիս բարի ոգիների կերպարանքով: Չար աչքից, չար ոգիներից խույս տալու մտահոգությունը առանձնապես դրսևորվել է հարսանեկան օրերին, երբ նոր օջախի ու կյանքի հիմքն էր դրվում:

Այսպես, չար աչքի դեմ ուղղված ընդհանրական մի սովորության համաձայն՝ նորասպակ գույզը աման կոտրելով դռնից ներս պետք է մտներ, որպեսզի «չարի գլուխն էլ այդպես կոտրվի»: Այդ առթիվ Բաղեշում գոչում էին. «Կոտրի քեսսեն, ապրի փեսեն»<sup>46</sup>: Նորահարսը ներս մտնելուց առաջ պետք է մի նուռ կոտրեր՝ դրանը հարվածելով, իսկ փեսան՝ աներոջ տնից գողացած գոլալ, վայ նրանց, որ մեկ հարվածով չկարողանային կոտրել: Սովորության համաձայն՝ հարսանքավորների՝ փեսայի տուն հասնելուն պես դռան առաջ գույզի ոտքերի մոտ ոչխար կամ

<sup>44</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Եր., 2004, էջ 134:

<sup>45</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 1, էջ 79-82:

<sup>46</sup> Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 205-207:

գոնե հավ էին զոհաբերում՝ զլուխը շննին դրած: Չոհի արյունով խաչ էին գծում դռան կամարակապ քարին կամ սեմին: Նախ թագվորն էր ոտքը կոխում արյան մեջ ու ներս մտնում, որին հետևում էր թագուհին՝ ջանալով նախ աջ ոտքը դնել սեմից ներս: Աջի գործածությունը հաջողության հասնելու կարևոր պայման էր:

Հարսանիքի տոնախմբության ավարտին՝ մինչ առազատ մտնելը՝ **մեկտեղիլը**, փեսային տանում էին աղբյուրը՝ «ջրելու»: Փեսան յոթ անգամ կավե ամանով ջուր էր լցնում ու դատարկում աղբյուրի մեջ, հետո ջրով լի ամանով վերադառնում հարսանքատուն՝ պարողներին նույն ջրով ցողելով: Ժողովրդական պատկերացումների համաձայն՝ աղբյուրն իր մեջ կրում է չար ու բարի ոգիների մի ամբողջ աշխարհ: Ջրապաշտության մեջ մեծ տեղ են գրավել ջրի բուժիչ հատկությունները: Ըստ այդմ՝ ջուրը բուժում կամ կանխում է ամլությունը:

Հարսանյաց ծիսաշարի կարևորագույն մասն են նաև այն արարողությունները, որոնք կոչված էին ապահովելու հարսի բարեհաջող մուտքը նոր ընտանիք: Հարսին հոր տնից հանելու պահին, Խուլքիկ գյուղի սովորության համաձայն, մեջտեղ էին բերում յոթ լավաշ, որը կիսում էին հարսի հոր տան և փեսայի քավորները: Հարսի հորական տան քավորը իր բաժինը տալիս էր հարսի տնեցիներին, իսկ փեսայի քավորը իր բաժինն ուղարկում էր փեսայի տուն: Այս ծիսական արարողությունը հայտնի էր «հաց կիսել» անվամբ:

Քանի դեռ տղամարդիկ այս արարողությամբ էին զբաղված, հարսի տան կանայք փեսայի տան կանանց գաթա և չամիչ էին բաժանում: Փեսայի ընկերներից մեկն էլ հավ ու գաթա էր ստանում: Հավը «մատողում» էր եկեղեցում պսակի գնալիս: Նվազի և հարսանեկան ժխորի պահին խաբբով ու հնարամտությամբ հարսի կողմից մի երիտասարդ համբուրում էր փեսայի կողմի մի աղջկա: Սա էլ հայտնի էր «խնամապագ» անունով<sup>47</sup>: Աղձնիքում ընդունված էր հարսի ուտերին սկեսուրի ձեռքով լավաշներ զցելը՝ ասելով. «Ոտքդ խերով լինի, ամբարներդ հացով լիքը»<sup>48</sup>: Տուն մտնելուց հետո հարսն այն զցում էր տան վերին անկյուններից մեկը, որպեսզի իր ոտքը բարի լինի, իսկ տունը՝ միշտ հացով լի: Խուլքիկ գյուղում հարսին ու փեսային յոթ անգամ պտտեցնում էին թոնրի շուրջը, ամեն մի պտույտի ժամանակ հարսի ուտերի վրայի յոթ հացերից մեկը և ծամերի չամիչ շարանից չամիչ էին շալտում դեպի կանգնածները: Նրբեմն սկեսուրը հարսին դիմավորում էր այլուրն ու չամիչը ձեռքին, իսկ հարսը, մատը թաթախելով այլուրի մեջ, խաչեր էր անում դռան կողերին<sup>49</sup>, որը, ըստ երևույթին, աղերս ուներ մարդուն հաց պարզևող Ամանոր և Վանատուր աստվածությունների հետ<sup>50</sup>:

Ուշագրավ է, որ հարսանիքի ընթացքում գործածվող լեզվական արտահայտություններից շատերը ևս հավատալիքային առնչություններ ունեն: Այսպես, կար սովորույթ, ըստ որի նշանադրության և հարսանիքի ընթացքում չէին ասում «Քարի իրիկուն», այլ «Քարի լույս»՝ փորձելով «խաբել» մթանը վխտացող երևակայական չարին: Դժվարին խնդիր էր խնամախոսության ժամանակ միանգամից բանալ այցելության նպատակը, ուստի խոսակցությունը զցում էին սար ու ձոր, մինչև որ հանգում էին բուն նյութին: Բերենք տարբեր տեղերում գործածական արտահայտություններից մի քանիսը. «Եկել եմ ձեր օջախից մի բուռ մոխիր տանեն», կամ՝ եկել ենք մի «լաչակ խնդրելու», իսկ հարսնամայրը աղջկա՝ տնից բաժանվելու պահին ասում էր փեսային. «Աստված ձեզ հետ, քու՛ ին օջախից վերառած մի բուռ մոխիրը թող ոսկի դառնա» և այլն:

<sup>47</sup> Տե՛ս 3. Տոտովյան, նշվ. հոդվածը:

<sup>48</sup> ԴԱՆ, տ. 13, էջ 24-25:

<sup>49</sup> «Մասիս», 1885, № 3763, էջ 852: ԴԱՆ, տ. 2, էջ 204:

<sup>50</sup> Վ. Բոլյան, Վանատուր և Ամանոր ծպտյալ պաշտամունքների հարցի շուրջը, ԲԵՂ, 1977, № 2, էջ 146-161:

Նման մոգական պատկերացումների հետ էր կապվում նաև մի սովորույթ, ըստ որի հարսն ու փեսան հաճախ խուսափում են ներկա գտնվել իրենց մասին խոսակցություններին: Ժողովրդի ընկալմամբ դա համեստության չափանիշներից է: «Անոթ ունեցող տղան» չպետք է մասնակցեր իր ամուսնության մասին խոսակցություններին: Շատ դեպքերում հարսն ու փեսան առաջին անգամ միմյանց տեսնում էին միայն պսակի ժամանակ. նշանադրությունը կայանում էր առանց նրանց մասնակցության, իսկ հարսնացուն ոչ միայն ներկա չէր լինում, այլև տանը չէր մնում, գնում էր բարեկամներից մեկի տուն: Ավելի մեղմ ձևն այն էր, որ փեսացուն որոշ գործողությունների և խնջույքների կարող էր մասնակցել, բայց պետք է լուռ ու մունջ լիներ: Աղձնիքահայոց սովորույթի համաձայն՝ նորահարսի պարտականություններից էր տարիներով փակ պահել երեսը օտար տղամարդու առաջ<sup>51</sup>, որը, բարոյական խստության խորհրդից զատ, կարող էր նաև հավատալիքային ծագում ունենալ:

Սկսած տաշտադրոնքի օրից՝ եզ մորթելը, մեռյալների գերեզմանների օրհնությունը, այդ ամուսնության տարում մեռյալներ ունեցող ազգականների կամ հարևանների տուն այցելությունը, լողացնելը, ածիլելը, հինայելը, զգեստավորելը, «հալավօրհները», հարսի գոտին կապելը, հարսնառի երթը, փեսային և հարսին նվիրված երգերը, նոր ամուսնացողների կողմից հայրենական տան օջախի համբուրումը, հայրական տնից հարսին դուրս բերելը և աղջկա գյուղի հասարակության կողմից նորապսակների ընդունելությունը, փեսայի մոր կողմից դիմավորման ծեսերը, շենքին կատարված զոհաբերությունը, հարսի և փեսայի գլխին պտուղներ շաղ տալը, տան մեծերի կողմից նորապսակների օրհնությունը, փեսայի հայրական տան օջախի շուրջը պտտվելը և համբուրելը, մինչև եկեղեցական կամ թոնրի պսակն ու հարսանիքը տեղի ունեցող արարողությունները ուղեկցվում էին ժողովրդական հավատալիքների մի կուռ ցանցով, որը, անշուշտ, միտված էր նոր ընտանիք կազմելուն, սերնդաճը ապահովելուն:

Այսպիսով, հարսանեկան ծեսերի առանձին փուլեր, ըստ առաջացման աղբյուրների, կապված են նախնական հավատալիքների, բարի ու չար ոգիների, սովորության, կանոնախրավական չափանիշների և բարոյական պատկերացումների հետ: Ընդհանրապես Հայաստանի տարբեր գավառների հարսանյաց հանդեսներն իրենց ծիսական համակարգով չափազանց հարազատ են միմյանց և արտահայտում են չարքերի դեմ պայքարի գաղափար:

**Р. А. НААПЕТАН — Народные поверья, связанные со свадебными обрядами армян Ахдзника.** — В статье представлены обусловленные поверьями и религиозно-мистическими представлениями свадебные обряды армян Ахдзника. Рассматривая разные этапы свадебного действия, автор заключает, что они в своих истоках связаны с более ранними верованиями, с представлением о добрых и злых духах, с народными традициями, с правовыми и нравственными устоями. Начиная с предваряющих свадьбу обрядов и кончая венчанием в церкви или у очага, а также самой свадьбой, все культовые действия сопровождалось целым рядом народных поверий, которые, конечно же, были нацелены на создание семьи и обеспечение потомства.

<sup>51</sup> Տե՛ս Ռ. Նահապետյան, Խուսափման սովորույթների դրսևորումները աղձնիքահայրի ընտանեկան կենցաղում, ԲԵՂ, 2005, թիվ 1, էջ 145-154: